

**ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը
Մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ**

Միրելի հայրենակիցներ

Սրտանց շնորհավորում եմ ձեզ Մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ:

Աշխարհի բազմաթիվ ազգերի հետ հայ ժողովուրդը ևս այսօր տոնում է երկրորդ աշխարհամարտում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը, և դա շնորհիվ ձեզ, սիրելի վետերաններ:

Ամեն տարի այս հրաշալի օրը մենք համակվում ենք միասնության ու համախմբվածության, ազգային ոգու և արժանապատվության նվիրական զգացումներով, որոնց շնորհիվ ձեռք են բերվել մեր բոլոր բախտորոշ հաջողություններն ու նվաճումները:

Մեր պապերի և հայրերի մայիսինյան կերտած պատմական հաղթանակը հիմք դարձավ նորօրյա հերոսապատումի՝ Շուշիի ազատագրման համար: Հաղթանակ, որով մեր սերունդը մեկ անգամ ևս ամրագրեց ազատության և խաղաղ կյանքի իր իրավունքը:

Գլուխ խոնարհելով նահատակների հիշատակի առաջ՝ ամենաջերմ շնորհավորանքներն եմ հղում մեծ Հայրենականի և արցախյան ազատամարտի վետերաններին, նրանց ընտանիքներին, սյունյաց ժողովրդին:

Միրելի հայրենակիցներ, մաղթում եմ ձեզ քաջառողջություն, տոնական բարձր տրամադրություն՝ հանուն մեր անկախ պետականության ամրապնդման, համազգային նպատակների իրականացման:

ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան